նէր. եւ եդ բանս ի բերան[1] սպասաւորացն, զի ստիպեսցեն զանհրապոյրն
Գայիանէ՝ ասել ի դրաց անտի ի ներքս ի սենեակն առ Հռիփսիմէ, թէ[2] արա՛[3]
զկամս դորա, եւ կեա՛ց դու եւ մեք:

*7* Իսկ նա[4] յանձին կալեալ խաւսել ընդ սանուն իւրում, եւ մատուցեալ
[5]ասէ ի դրաց անտի ի ներքս [6]ի սենեակն առ Հռիփսիմէ. «Որդեակ, պահես-
ցէ՛ զքեզ Քրիստոս ի պղծութենէդ եւ լիցի քեզ զաւրաւիգն[7]. [8]քա՛ւ քեզ, որ-
դեակ, եթէ լիցի[9] քեզ ելանել ի ժառանգութենէ անտի կենացն Աստուծոյ, եւ
ժառանգել[10] քեզ[11] զանցաւորս[12], որ [13]ոչ ինչ [14]իսկ է, այսաւր է, եւ վաղիւն
կորնչի[15]»:

*8* Իբրեւ[16] իմացան, թէ զո՛ր խրատ յաճախեաց մատուցանել՝ բերեալ
քարինս՝ հարկանէին զբերանն[17], մինչեւ թափել[18] ատամանցն[19]. եւ ստի-
պէին ասել նմա, զի արասցէ զկամս թագաւորին:

*9* [20]Նա եւս քան զեւս պնդէր եւ ասէր. «Քաջալերեա՛ց[21], պինդ կաց, եւ
այժմ տեսանես զՔրիստոս, առ որ անձկացեալն[22] ես[23]: *10* Յուշ լիցի քեզ, որ-
դեակ, [24]հոգեխառն սնունդն, [25]որով զքեզ սնուցի: *11* Յուշ լիցի քեզ աս-

---

*1* a *ի բերանս*
*2* Ա *զի*, փխ. *թէ*
*3* a *կատարեաց*, փխ. *արա*
*4* ԱԲԴՁ *նորա*, փխ. *նա*
*5* ԱԲԴՁ *ի դրաց անտի ասէր* / a *ասէր*
*6* abd չիք *ի սենեակն առ հռիփսիմէ*
*7* abd *զաւրաւիգն* / ԱԲՁ *զօրավիգն* / Դt *զօրավիգ*
*8* abdԱԲԴՁ *քաւ* [Ձ *քո*, փխ. *քաւ*] *քեզ* / t *քաւ լիցի քեզ*
*9* d *եթէ լինիցի*
*10* d *ժառանգեալ*
*11* bԱԲԴՁ չիք *քեզ*
*12* ad *զերկրաւորս*, փխ. *զանցաւորս*
*13* ԱԲԴՁ *ոչինչ է այսօր եւ*
*14* ad *իսկ են այսաւր եւ* / b *իսկ են, որ այսաւր է*
*15* a *կորրչին* / d *կորնչի*
*16* abd *իսկ իբրեւ*
*17* b *զբերան նորա*
*18* d *ի թափել*
*19* a *ատամացն* / ԱԲԴՁ *ատամանց նորա*
*20* ԱԲԴՁ *եւ նա եւս քան* [Դ չիք *քան*] *քան զեւս պնդեալ ասէր*
*21* ad *քաջ լեր*
*22* abd *անձկացեալն* / ԱԲՁ *անծկացեալն* / Դ *անծակեալն* / t *անձկացեալ*
*23* adԱԲՁ *էիր*
*24* b *հոգեւոր սնունդն իմ*
*25* ad *որով սնուցի զքեզ*